նանոյ խառնակողն և խառնակցեալն 'ի միջի հրոյ այրեսցի։

ԳԼՈՒԽ ՆԺԶ.

Մի ոք պահեսցէ ընդ տանն իւր շուն յառ զի մի խայծատեսցի արանց և խաշանց, եթէ պատահաբար խայծատեալ Տեառն շանն կամ տացէ շունն իւր խայծատողին, կամ հատուցումն արասցէ խայծատելոյն, նա ևս եթէ հատուցումն խայծատելոյն արասցէ և անհոգս կալով զի շունն այն կրկին խայծատէ, սատակեսցի շունն և Տեառն նորա մտցէ բանտ երեսուն աւուր ծախիւք իւրօք։

ԳԼՈՒԽ ՆԺԷ.

Ում որ խաշին մատակ և զամենայն զոր ինչ անասուն որ պատահաբար ճարակեսցի արաս, և կամ հանդս և կամ դաշտս այլոց, հատուցանէ զին ճարակեալ խոտոց և ամենայն բուսոց առ տեառն իւրոյ։

ԳԼՈՒԽ ՆԺԸ.

Ով ոք որ երդմնելով տացէ վկայութիւն սուտ, զամենայն զոր ինչ վնաս եղեալ 'ի սուտ վկայութենէ իւրմէ, հատուցանէ վնասելոյն և յինքն մտցէ 'ի բանտ ժամանակաւ վեց ամիս, և 'ի ատենէ դատաստանէ գրեսցի թուղթ յայտ-